ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՎԱԲՏ-ԲՄԽԾՁԲ-26/14» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 28.11.2025թ.

ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Ա. Համբարձումյան

Անդամներ՝
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ՝ Վ. Բարսեղյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Գ. Մարտիրոսյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ Ս. Թոփակյան
Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության գլխավոր իրավաբան՝ Մ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

1. Տեղեկություն հայտերի բացման օրվա և ժամի մասին

1.1 «**ՎԱԲՏ-ԲՄԽԾՁԲ-26/14**» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են նոյեմբերի 28-ին ժամը 10:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և էլեկտրոնային փոստի հասցեները.

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	paara.akademia.gnumner@mail.ru հեռ. 010-22-26-20
2	«ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ	Gnumner@edupolice.am հեռ. 010-77-08-81

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել է համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

4.1 Հարցադրումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 «**ՎԱԲՏ-ԲՄԽԾՁԲ-26/14**» ծածկագրով մասնակիցների էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են, համապատասխանում են «**ՎԱԲՏ-ԲՄԽԾՁԲ-26/14**» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի:

Մասնավորապես՝ մասնակցի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում՝

ա) **հավելված N 1.1**-ում / «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին/ բացակայում է սույն տեղեկատվության մեջ նշված պայմանագրի պատճենը, այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը) պատճենը.

բ) **հավելված N 1.2**-ում /տեղեկություն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին/ բացակայում է սույն տեղեկատվության մեջ նշված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև հրավերով պահանջվող փաստաթղթերը (դիպլոմ, CV և այլն), ինչպես նաև սխալ է գրված մրցույթի անվանումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

6. « ՎԱԲՏ-ԲՄԽԾՁԲ-26/14» ծածկագրով մրցույթի մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց

6.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ծանուցել «ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ին, որպեսզի մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկի նշված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 01-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունները

Նախագահ՝	Ա. Համբարձումյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Վ. Բարսեղյան	ԳՊ/ԳԱ	
	Մ. Սարգսյան	ԳՊ/ԳԱ	
	Ս. Թոփակյան	ԳՊ/ԲԱ	
	Գ. Մարտիրոսյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Լ. Ադոնց	ԳՊ/ՄՀՄ	